ԳՐԻԳՈՐ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Դժվար է կրտսերի մասին հրաժեշտի խոսք ասել: Առավել քան դժվար է դա Գրիգոր Հակոբյանի դեպքում: Մեր կրտսեր եղբայրն էր տարիքով, բայց գրականագիտության մեջ վաղուց դուրս էր եկել կրտսերության վիճակից և դարձել այսօրվա հայ գրականագիտության առաջատար դեմքերից մեկը: Այդքան անմնացորդ նվիրում գրականությանը ես քիչ եմ հանդիպել: Մեր այս կյանքի դժվարությունները նրան ստիպում էին աշխատել տարբեր տեղերում. բայց գրականագիտությունը, հետազոտողի աշխատանքը մնաց նրա կյանքի գլխավոր գործը: Դժվարանում եմ ասել՝ հայ և համաշխարհային գրականության ո՞ր հատվածը վատ գիտեր, որովհետև թվում էր, թե ամեն ինչ գիտե: Շատ լավ գիտեր եվրոպական գրականագիտական և փիլիսոփայական մտքի դասականներին, հետևում էր նորություններին: Եվ ո՞վ կարող էր նրանից լավ կազմակերպել նորաստեղծ «Գրականագիտական հանդեսի» աշխատանքները: Հենց առաջին համարից, իբրև փոխխմբագիր, եղավ հանդեսի խմբագրության կենտրոնական դեմքը, հանդեսի աշխատանքներին ներգրավեց հանրապետության և արտասահմանի նշանավոր գրականագետներին:

Չթվարկեմ նրա աշխատությունները. բայց չեմ կարող չասել, թե ինչ տքնանքով արխիվներից հանում էր մեր գրականության փոշոտված էջերը և մատուցում էր ընթերցողներին: Այդպես, բոլորովին վերջերս, տպագրվեց Երվանդ Օտյանի «Անիծված օրեր» հուշագրությունը Եղեռնի տարիների մասին, որը, մի անգամ տպագրվելով մամուլում, այնպես էլ անհայտ էր մնացել հետագա տարիների ընթերցողներին:

Գրիգորը բանասերի, գրականագետի աստվածատուր տաղանդով էր օժտված: Նրա հոդվածները, մենագրությունները, զեկուցումները կարդացվում էին անփոփոխ հետաքրքրությամբ, մանավանդ այդ բոլորը նա գրում էր գեղեցիկ, հարուստ, ավելի ու ավելի բյուրեղացող լեզվով: Նրա մեջ միահյուսված էին տեքստաբանը, բանասերը, գրականության տեսաբանն ու պատմաբանը: Եվ բարձր պատասխանատվությամբ էր վերաբերվում իր մասնագիտությանը, տքնում էր իր բոլոր հրապարակումների վրա ամենաբարձր խստապահանջությամբ: Շատ բան կարողացավ անել, բայց ավելի շատ դեռ պետք է աներ... Գնահատված էր այստեղ, գնահատված էր Սփյուռքում:

Դժվարին եղավ Գրիգորի կյանքը: Բայց կենսական բոլոր դժվարությունների մեջ նա կարողացավ պահել հոգու պայծառությունը: Երիտասարդների առաջին օգնականն էր, ավագների հավատարիմ բարեկամը և հենարանը: Եվ այդ բոլորի մեջ երբեք չդավաճանեց իր սկզբունքներին, իր մարդկային կերպին: Հումորի փառահեղ զգացումով էր օժտված:

Այնքա՜ն մեծ հույսեր էինք կապում նրա հետ, մանավանդ Գրականության ինստիտուտում, որտեղ անցավ նրա ամբողջ գիտական կյանքը: Բայց ավաղ...

Եվ հիմա մեզ մնում է, դժվարությամբ զսպելով արցունքները, ասել.

- Գնաս բարով, սիրելի Գրիգոր: Քո լուսավոր հետքը կմնա բոլորիս կյանքում, մեր գրական ու գիտական առօրյայում:

ԱՋԱՏ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ